ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱ ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2018/01/03

ք. Երևան «12» հունվարի 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Շիրակ Գևորգի Սանդրոյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Ապարանի հեռուստակայանը սնող 10Կվ լարման օդային գծի ՇՍ-10 տիպի մեկուսիչի վերանորոգում և օդային գծի վերականգնում:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2018թ. հունվարի 12-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում քսաներկու հազար ՀՀ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է փոխանցումով՝ փաստացի կատարված աշխատանքի հանձնման-ընդունման ակտի հիման վրա, դրանց ստորագրումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Յունիբանկ ԲԲԸ
Հ/հ 24100200177400
ՀՎՀՀ 01501898

Գլխավոր տնօրեն

Գ.Ալոյան

Կատարող՝

Սանդրոյան Շիրակ
Անձնագիր AM0470179
տրված 17.10.2011թ., 023-ի կողմից
Ք. Ապարան,փ Շահումյան 10 տուն
Ս/Ք 1601590444
հ/հ 2470029245840010

Շ.Սանդրոյան

1-9

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀՌՑ ՓԲԸ գլխավոր տնօրենի
տեղակալ
Ս. Դավթյան

12.01.2018թ.

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

Մենք, ներքոստորագրյալներս, «ՀՀՌՑ» ՓԲԸ Էներգետիկական ծառայության գլխավոր մասնագետ Է.Խաչատրյանը, Կենտրոն տարածքային բաժնի պետ Ա. Արշակյանը,այսուհետ Պատվիրատու, մի կողմից, և Շիրակ Սանդրոյանը, այսուհետ Կատարող, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.

-Համաձայն 12.01.2018թ. կնքված աշխատանքների կատարման թիվ 2018/01/03 քաղաքացիա-իրավական պայմանագրի, Կատարող Շ. Սանդրոյանի կողմից իրականացվել է ընկերության Ապարանի հեռուստակայանը սնող 10Կվ լարման օդային գծի ՇՍ-10 տիպի մեկուսիչի վերանորոգման, օդային գծի վերականգնման աշխատանքներ:

Աշխատանքները կատարվել են ժամանակին ու որակով, և հանձնվել են Պատվիրատուին, որի համար ստորագրում ենք:

Ընդունեց	Հանձնեց
Է.Խաչատրյան	Շ. Սանդրոյան
Ա. Արշակյան	